Գաղտնիության քաղաքականություն

1. Ընդհանուր դրույթներ

Սույն Գաղտնիության քաղաքականությունը (այսուհետ՝ Քաղաքականություն) սահմանում է, թե ինչպես է **BusinesStart** առցանց տեղեկատվական հարթակը (այսուհետ՝ BusinesStart) հավաքում, օգտագործում և պաշտպանում օգտատերերի անձնական տվյալները (այսուհետ՝ Օգտատեր):
BusinesStart-ը պարտավորվում է ապահովել Օգտատիրոջ տվյալների անվտանգությունն ու գաղտնիությունը՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը համապատասխան: Նախքան BusinesStart-ի ծառայություններից օգտվելը, Օգտատիրոջից ակնկալվում է կարդալ և ծանոթանալ սույն Քաղաքականությանը ամբողջությամբ: Եթե Օգտատերը համաձայն չէ սույն քաղաքականության որևէ դրույթի հետ, նա պարտավոր է ձեռնպահ մնալ BusinesStart-ի ծառայություններից:

2. Գրանցման կարգը

BusinessStart-ում գրանցվելու համար օգտատերը պետք է մուտքագրի իր անձնական տվյալները (Անուն, Ազգանուն, էլեկտրոնային հասցե, հեռախոսահամար) և լրացնի բիզնեսի վերաբերյալ պահանջվող դաշտերը (գործունեության փուլ, ոլորտ, կարիքներ):

Գրանցման ընթացքում.

- Օգտատերը հաստատում է, որ տրամադրված տվյալները ճիշտ և ամբողջական են,
- Նշում է համապատասխան քառակուսին (checkbox), որով տալիս է համաձայնություն գաղտնիության քաղաքականությանը,
- Ընդունում է, որ իր մուտքի և գաղտնաբառի միջոցով կատարված բոլոր գործողությունները համարվում են իր կողմից կատարված:

Օգտատերը պատասխանատու է իր հաշվի տվյալների գաղտնիությունը պահպանելու համար և պարտավոր է անմիջապես տեղեկացնել BusinesStart-ին ցանկացած չարտոնված մուտքի կամ անվտանգության խախտման դեպքում:

Գրանցվելուց հետո օգտատիրոջ կողմից նշված էլեկտրոնային հասցեին ուղարկվում է **հաստատման նամակ**, որտեղ ներառված է գրանցման հաստատման հղում: Օգտատերը պետք է սեղմի այդ հղման վրա՝ իր հաշիվը ակտիվացնելու համար:

Վճարումը կատարվում է էլեկտրոնային հասցեի հաստատումից հետո: Վճարման իրականացման համար Օգտատերը ընտրում է վճարման եղանակներից մեկը:

Միայն էլեկտրոնային հասցեն հաստատելու միջոցով հաշվի ակտիվացումից և վճարումը իրականացնելուց հետո օգտատերը ստանում է լիարժեք մուտք **BusinessStart** հարթակ:

3. Հավաքվող տվյալներ

Գրանցման և վճարման գործընթացում BusinesStart-ը կարող է հավաքել հետևյալ տվյալները.

- Անուն, Ազգանուն
- Էլեկտրոնային հասցե
- Հեռախոսահամար
- Գործունեության փուլ (գաղափար, գործող բիզնես և այլն)
- Գործունեության ոլորտ (ծառայություններ, առևտուր, արտադրություն, SS և այլն)
- BusinesStart հարթակից ակնկալվող կարիքներ և խնդիրներ
- Վճարման տվյալներ (միայն՝ անվտանգ փոխանցման միջոցով)

Բացի այդ, BusinesStart-ը օգտագործում է cookie-ներ և վերլուծական գործիքներ (Google Analytics և այլ)՝ BusinesStart-ի ֆունկցիոնալությունը բարելավելու և այցելությունների վիճակագրություն ստանալու համար:

4. Տվյալների օգտագործման նպատակները

Օգտատիրոջ տրամադրած տվյալները կարող են օգտագործվել հետևյալ նպատակներով.

1. Բիզնեսի տեսակների հետազոտություն
2. Օգտատերերի կարիքների վերլուծություն և համապատասխան առաջարկների մշակում
3. Անանունացված ընդհանուր տվյալների մշակում և վիճակագրական վերլուծություն
4. Կայքի նորությունների, թարմացումների և բանկային առաջարկների ուղարկում օգտատերերի էլեկտրոնային հասցեին
5. Հարթակի ծառայությունների մատուցում և բաժանորդագրության կառավարում
6. Տեխնիկական աջակցության ապահովում և օգտատերերի հարցերին պատասխան
7. BusinesStart-ի ծառայությունների բարելավում և անհատականացված բովանդակության տրամադրում

5. Տվյալների փոխանցում երրորդ կողմերին

BusinesStart-ը չի փոխանցում Օգտատիրոջ անձնական տվյալները երրորդ անձանց՝ բացառությամբ այն դեպքերի, երբ.

- դա անհրաժեշտ է ծառայությունների մատուցման համար (օր.՝ վճարային համակարգեր),
- պահանջվում է օրենքով,
- Օգտատերը տվել է իր համաձայնությունը:
  Վիճակագրական և անանուն տվյալները կարող են օգտագործվել բանկերի և գործընկերների հետ համատեղ՝ բացառապես վերլուծական նպատակներով:

6. BusinesStart-ի ֆինանսական հաշվիչներ մուտքագրվող ֆինանսական տվյալների գաղտնիություն

Օգտատիրոջ կողմից ֆինանսական հաշվիչներում մուտքագրված ֆինանսական տվյալները չեն փոխանցվում երրորդ անձանց և չեն պահպանվում BusinesStart-ի սերվերներում կամ օգտատիրոջ անձնական հաշվում:

Տվյալները օգտագործվում են բացառապես հաշվարկների համար և հասանելի են միայն օգտատիրոջ սարքում: Եթե օգտատերը ընտրում է արդյունքները ներբեռնել, տվյալները պահվում են միայն նրա համակարգչում և չեն հասանելի որևէ այլ անձի, այդ թվում՝ կայքի ադմինիստրատորներին:

7. Տվյալների պահպանման ժամկետ

Օգտատիրոջ անձնական տվյալները պահպանվում են այնքան ժամանակ, որքան անհրաժեշտ է ծառայությունների մատուցման և իրավական պարտավորությունների կատարման համար:

8. Տվյալների անվտանգության միջոցառումներ

BusinesStart-ը կիրառում է տեխնիկական և կազմակերպչական միջոցառումներ՝ Օգտատիրոջ տվյալները պաշտպանելու չարտոնված մուտքից, փոփոխությունից կամ ոչնչացումից:

9. Օգտատիրոջ իրավունքներ

Օգտատերն իրավունք ունի.

- տեղեկանալ, թե ինչ տվյալներ է հավաքում BusinesStart-ը,
- պահանջել իր տվյալների ուղղում կամ ջնջում,
- հրաժարվել էլեկտրոնային հաղորդագրություններից (unsubscribe հղումով կամ BusinesStart-ին դիմելով),
- հետ կանչել իր համաձայնությունը տվյալների մշակման վերաբերյալ:

10. Cookie քաղաքականություն

www.businesstart.am կայքը օգտագործում է cookie-ներ՝ Օգտատիրոջ փորձը բարելավելու և վերլուծական տվյալներ ստանալու նպատակով: Օգտատերը կարող է վերահսկել cookie-ների օգտագործումը իր դիտարկիչի կարգավորումներում:

11. Քաղաքականության փոփոխություններ

BusinessStart-ը իրավունք ունի թարմացնելու սույն Գաղտնիության քաղաքականությունը: Թարմացված տարբերակը միշտ հասանելի կլինի www.businesstart.am կայքում:

12. Կապ BusinesStart-ի հետ

Եթե Օգտատերը ունի հարցեր կամ մտահոգություններ տվյալների մշակման վերաբերյալ, կարող է դիմել BusinesStart-ին՝

info@businesstart.am

+374 91 777 818